

Հայ Պատրիարքութիւնը մնաց Հայաստան մարմնի ան-
ջատեալ գլուխը . Գիւրդ Շըխութիւնը թէև Օսմանցիներու
ձեռքին կրնար մահմետականացնելով իրենց մէջ ձուլելու միջոց
դառնալ, բայց Գիւրդերը առանց իւրացնելու պաշտօնապէս
ընդունեցին մահմետականութիւնը . ու Օսմանցիներու աչքին
երևալով Օսմանցի ու Մահմետական , յաջողեցան պահել իրենց
ժառանգական կիսանկախ դիրքը (**):

Օսմանեան այդ ժամանակի իշխանութիւնը , թէև տուել էր
Հայերուն կրօնական ազատութիւն , անտեսական գործունէու-
թեան լայն ասպարէզ , բայց կրօնական խտիր զօրաւոր էր , և
կրօնական տեսլութիւն անսահման : Օսմանցիք Հայերուն իրր
Քրիստոնէայ կ'արճամարտէին դայն կոչելով «Գեալուր» , որ իր
հասարակական նշանակութեամբ կը հասկցուի («Աստուած և
ճշմարտութիւն ծածկող ու կեղծող») : Քաղաքական շատ իրա-
ւունքներէ զրկելով , ոչ միայն գինւորական դառնալու , կամ
զէնք կրելու , այլ և ձի նստելու արձանութիւն չէին տար :
Հայը երկրի անտեսական գործերու մեծ մասի հորձը վայելե-
լով , (որովհետև ամեն տեսակ իրաւունքը՝ ևն , ընդունելու էր
իրր հորձ) , հայկական քաղաքների բնակչութեան նպատակա-

«Հայերու վրայ բռնի կրօնափոխութիւններ միշտ եղած են . և կան
բազմաթիւ Գիւրդ ցեղեր՝ որ ուրիշ բան չեն՝ բայց եթէ խլամացած Հայերս
Գիւրդերու միայն մաս մը կսցուն բնակութիւն ունի և երկրագործու-
թեամբ կ'զբաղի՝ որ խաղաղ և աշխատասէր ժողովուրդ մ'է . բայց մեծա-
գոյն մասը կէս թափառական են :

(Երես 9) . Գիւրդերը եթէ կը յարձակին Քրիստոնէայ բնակչութեան
վրայ , իրենց կրօնական մոլեռանդութենէն չէ , մասնաւոր պարագաներ
եղած ըլլալու են՝ որոցմէ դրդեալ այն աստիճանի անագործնութեամբ
այն տեղերուն մէջ Հայոց դէմ կը կռուին . մինչդեռ ուրիշ վիլայէթներու
մէջ լի ու լի խաղաղութիւն կը տիրէ :»

Յետոյ կը յիշէ այդ սոսկալի յարաբերութեանց դէպքերը , որ ինք
կը վերագրէ , նախ Թուրքիոյ կառավարութեան յառաջագոյն գործած
սխալներուն , ու անոնց շարունակութեանը՝ սխալմաներով , օրինակ՝ Հա-
միտիէ գուրդերու կազմութեամբ ևն .

(**) Յայտնի է որ Օսմ . կառավարութիւնը շատ նեղութիւն կրեց
Գիւրդերը խլամ դարձնելով և դանոնք իրեն կապելով . . .

(Տէր Քրիստիիէ Օրիէնդ . 1904 . Նոյ .)